Agreement number: 81297265
Project processing number: 18.2062.0-009.00
GIZ Program: ECOServe Armenia
Project: Building Resilience to Enhance Food Security: Establishment of a Circular AgroFood Model at the ANAU-Balahovit Farm in Armenia
Recipient: Armenian National Agrarian University Foundation (ANAU)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ
Օրգանական ծագման պարարտանյութերի/կենսազանգվածի ցուցադրական մոդելի տարածում ՀՀ մարզերում

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը հրավիրում է որակավորված կազմակերպություններին «Հայաստանում շրջանաձեւ ագրոպարենային մոդելի ներդրում ՀԱԱՀ-ի Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսությունում» նախագծի շրջանակում ստորեւ ներկայացված ծառայությունների համար գնառաջարկ տրամադրելու:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը «Հայաստանում շրջանաձեւ ագրոպարենային մոդելի ներդրում ՀԱԱՀ-ի Բալահովիտի տնտեսությունում» ծրագիրն իրականացնում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության եւ զարգացման նախարարության (BMZ) պատվիրակմամբ՝ Գերմանական միջազգային համագործակցության ընկերության (GIZ/ԳՄՀԸ) ECOserve Հայաստան ծրագրի աջակցությամբ:

Այս հայտարարության բաղկացուցիչ մասերն են՝

Մասնակցության չափանիշները եւ գնահատման կարգը

→ Հայտ կարող են ներկայացնել ՀՀ-ում գրանցված իրավաբանական կազմակերպությունները:
→ Հայտատուն կարող է հանդես գալ համատեղ գործունեությամբ (ՀԳ), որի դեպքում բոլոր անդամները միասին պատասխանատվություն են կրում պայմանագրի լիարժեք իրականացման համար:
→ Պայմանագիրը շնորհվում է բավարար գնահատված հայտերից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած հայտատուին նախապատվություն տալու սկզբունքով:

Ներկայացվող հայտի բովանդակությունը

Հայտատուն իր հայտում պետք է ներառի՝

→ Մասնակցի ստորագրած հայտի արժեքը։ Գնառաջարկը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները, այդ թվում՝ հարկեր, տուրքեր եւ այլն։
→ Իրավաբանական անձի/կազմակերպության պետական ռեգիստրում գրանցման վկայականի պատճեն։
→ Հայտատուի փորձը այս ոլորտում հավաստող փաստաթղթեր։

Հայտի ներկայացման կարգը

→ Հայտը կարելի է ներկայացնել թղթային եւ էլեկտրոնային տարբերակով մինչեւ սույն թվականի **սեպտեմբերի 26-ը, ժամը 12:00-ն՝** Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամ, ՀՀ, ք. Երեւան, Տերյան 74 հասցեով կամ ուղարկել hovh.anna.isyan@gmail.com էլհասցեով։
→ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը իրեն իրավունք է վերապահում ընդունելու կամ մերժելու որեւէ հայտ եւ չեղյալ համարելու մրցութային գործընթացը եւ մերժելու բոլոր հայտերը ցանկացած ժամանակ՝ նախքան պայմանագրի շնորհումը՝ առանց որեւէ պարտավորության ենթարկելու տվյալ հայտատուին կամ հայտատուներին, կամ առանց բացատրություն տալու հայտատուին կամ հայտատուներին «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի գործողությունների հիմքերի վերաբերյալ։
→ Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել ծրագրի համակարգողի հետ՝ hovh.anna.isyan@gmail.com էլհասցեով կամ զանգահարել +37494 48 87 85 հեռախոսահամարով։

Մատուցվող ծառայության նկարագրությունը

Հայաստանի ազգային ագրարային համալսարանը «Հայաստանում շրջանաձեւ ագրոպարենային մոդելի ներդրում ՀԱԱՀ-ի Բալահովիտի տնտեսությունում» նախագծի շրջանակում ՀՀ Կոտայքի մարզի Բալահովիտ համայնքում գործող փորձացուցադրական տնտեսությունում հիմել է գոմաղբից պարարտանյութ/կենսազանգված ստանալու փորձացուցադրական մոդելներ.

1. միկրոօրգանիզմների կիրառմամբ՝ չոր եւ հեղուկ կենսազանգվածի ստացման համար,

2. պարզ կոմպոստացման տեխնոլոգիայով՝ չոր պարարտանյութի ստացման համար,
3. որդակոմպոստացման (կարմիր կալիֆորնիական որդեր) տեխնոլոգիայի կիրառմամբ՝ չոր պարարտանյութի ստացման համար:

Հաշվի առնելով ծրագրի ընթացքում ստացված արդյունքները, նախատեսում ենք միկրոօրգանիզմների կիրառմամբ՝ չոր կենսազանգվածի ստացման մոդելը տարածել ՀՀ մարզերում՝ ոլորտում որոշակի փորձառություն ունեցող առաջատար 10 տնտեսություններում:

Մատուցվելիք ծառայությունը ներառելու է.

1. Շահառուների ցանկ, որտեղ ներդրվելու է առաջարկվող մոդելը, շահառուները պետք է լինեն ՀՀ մարզերից (նվազագույնը 7 մարզ), շահառու կարող են լինել նաեւ փորձացուցադրական կենտրոնները, ուսումնական հաստատությունները եւ այլն: Ընտրված շահառուների ցանկը վերահաստատելու է «Հայաստանում շրջանաձեւ ագրոպարենային մոդելի ներդրում ՀԱԱՀ-ի Բալահովիտի տնտեսությունում» նախագծի թիմը:
2. Անհրաժեշտ է, որ ընտրված շահառուներն ունենան գոմաղբ վերամշակելու փորձ, օրինակ՝ պարզ կոմպոստացման տեխնոլոգիա, կալիֆորնիական որդերի կիրառում եւ այլն:
3. Անհրաժեշտ է, որ ընտրված շահառուներն ապահովեն ջրի հասանելությամբ մոտ 20 քառ. մետր տարածք 3-5 մետր խորանարդ ծավալով՝ մոդելը ներդնելու համար:
4. Անհրաժեշտ է, որ ընտրված շահառուներն ապահովեն թռչնաղբի կամ գոմաղբի (խոշոր եւ մանր եղջերավորի, խոզի) բավարար ծավալ 3-5՝ մետր խորանարդ ծավալով մոդելը ներդնելու համար:
5. Անհրաժեշտ է, որ ընտրված շահառուներն ապահովեն թռչնաղբի կամ գոմաղբի (խոշոր եւ մանր եղջերավորի, խոզի) տեղափոխումը մոդելի համար նախատեսված վայր եւ 10 օր ընդմիջումով խառնումը տրակտորով:
6. Անհրաժեշտ է, որ ընտրված շահառուները զբաղվեն անասնապահությամբ կամ ունենան մշտապես թռչնաղբի կամ գոմաղբի (խոշոր եւ մանր եղջերավորի, խոզի) հասանելիություն եւ կենսազանգվածի արտադրությունը դիտարկեն որպես շարունակելի աշխատանք իրենց գործունեության համար:

7. Անհրաժեշտ է, որ ընտրված շահառուները պատրաստ լինեն իրենց փորձը փոխանցելու այլ ֆերմերային տնտեսությունների եւ հանդես գան որպես մոդելային ցուցադրական տնտեսություն։

Ընտրվոծ յուրաքանչյուր տնտեսությունում, ընդհանուր թվով տասը, անհրաժեշտ է ներդնել մոդելը՝ ապահովելով ստորեւ նշված ապրանքները/ծառայությունները։

Մեկ տնտեսությունում ներդրվող ապրանքների/ծառայությունների ցանկ

Հ/Հ	Նյութի/աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Պահանջվող քանակությունը մեկ տնտեսության համար
1	Լաբորատոր նմուշառում, յուրաքանչյուր տնտեսությունում 2 անգամ՝ մոդելը ներդնելու սկզբում եւ վերջում, համաձայն Աղյուսակ 1-ում նշված չափանիշների	փաթեթ	2
2	Միկրոօրգանիզմներ, յուրաքանչյուր փաթեթը՝ նվազագույնը 5 խ. մետրի համար, համաձայն Աղյուսակ 2-ում նշված չափանիշների	փաթեթ	1
3	Ջերմաչափ 0-100°C միջակայքը ապահովող՝ գոմաղբի ջերմաստիճանը չափելու համար	հատ	1
4	Ծածկող լուսակայուն թաղանթ՝ 150-200 միկրոն պոլիէթիլենից Նյութի խտությունը՝ 0,92 գ/սմ³ Ջերմահաղորդականությունը՝ 0,27 վտ/մկ Ջերմակայունությունը՝ 80 °C Ցրտադիմացկունությունը՝ -60 °C	մետր քառ.	25
5	Գոմաղբի խառնում տրակտորով եւ տեղափոխում	ժամ	3
6	Մասնագիտական խորհրդատվություն մոդելի ներդրման եւ կիրառման համար		

Արտադրության նկարագրություն

Արտադրությունն իրականացվելու է բաց գրունտի վրա, ունենալու է նվազագույնը 20 քմ տարածք, որտեղ կուտակվելու է թարմ թռչնաղբ կամ գոմաղբ (խոշոր եւ մանր եղջերավորի, խոզի), 3-5 մետր խորանարդ ծավալով, որի վրա հավասարաչափ բաշխվում են 10^{10} խտությամբ 1 փաթեթ միկրոօրգանիզմներ: Ստացված զանգվածը մինչեւ 2 ամիս, 25°C ջերմաստիճանի պայմաններում պետք է մշտապես ունենա 60-70% խոնավություն, եւ 10 օր պարբերականությամբ կատարվի խառնում՝ տրակտորով, օդի մուտքը ապահովելու համար: 2 ամսվա ընթացքում 2 անգամ իրականացվի լաբորատոր նմուշառում՝ որոշելու համար հանքայնացման աստիճանը: Լաբորատոր նմուշառումների՝ ագրոքիմիական անալիզների ցանկը՝ Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1: Լաբորատոր նմուշառմների՝ ագրոքիմիական անալիզների ցանկը

Հ/Հ	ID	Անվանում
1	NO_3^-	Նիտրատային ազոտ
2	NH_4^+	Ամոնիումային ազոտ
3	P_2O_5	Ֆոսֆոր
4	K_2O	Կալիում
13	CO_2	Կարբոնատ
14	Ca^{2+}	Կալցիում
15	Mg^{2+}	Մագնեզիում
16	EC	Էլեկտրահաղորդականություն (լուծված աղերի քանակը)
17	pH	Ջրածնային ցուցիչ
18	%C	Օրգանական նյութ (հումուս)
21		Նեմատոդների հայտնաբերում

Աղյուսակ 2: Կիրառվող միկրոօրգանիզմների համար անհրաժեշտ պահանջները.

Հիմնական Առանձնահատկությունը	Արդյունքները
Արտաքին տեսք	Փոշի
Համասեռություն	Համասեռ
Հոտ	Հատուկ
Գույն	Բաց-շագանակագույն
Լուծելիություն	Ստանդարտ

Բաղադրամասեր	**Զանգված, %**	**Արդյունքները**
Մանրէաբանական մաս	**1%**	Երաշխավորված է արտադրողի կողմից
Ֆուգատի մաացորդներ	**ոչ պակաս 1%**	Երաշխավորված է արտադրողի կողմից
Լցոնիչներ	**98%-99%**	Երաշխավորված է արտադրողի կողմից
Մանրէաբանություն	**նորմեր**	Արդյունքները
Աղիքային խմբի հարուցիչներ Սալմոնելա, Շիգելլա	**բացակայությունը 25 գ-ում**	Բացակայում են ըստ փորձի արդյունքների
Տիտր	**ոչ պակաս 1 տրիլիոն բջիջ 1 գ պատրաստուկում, 1010 ԳԱՄ/գ**	1,5 x 1010 ԳԱՄ/գ
Բակտերիալ պատրաստուկը 5 տարբեր շտամեր ունեցող Bacillu1s տեսակի աէրոբ բակտերիաների սպորների խառնուրդ է:		
Bacillus amyloliquefaciens VA27 Bacillus amyloliquefaciens VA31 Bacillus subtilis VA34 Bacillus subtilis VA44 Bacillus subtilis VA46		

Ծառայության մատուցման գնառաջարկների տրամադրման

Նմուշային Ձեւ (ՀԱՎԵԼՎԱԾ 1)

_____ _____/ կազմակերպության անուն, գրանցման համար, հասցե, ղեկավարի անուն ազգանուն/ սույն գնառաջարկով ներկայացնում է հետաքրքրություն Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամին մատուցելու օրգանական ծագման պարարտանյութերի/կենսազանգվածի

[1] Միկրոօրգանիզմների լատիներեն շտամները

ցուցադրական մոդելի տարածում ՀՀ մարզերում հայտարարության տեխնիկական առաջադրանքում նշված **ծառայությունները ամբողջական փաթեթով**:

Նշված ծառայությունների մատուցման համար ներկայացվում է գնառաջարկը, որը կազմում է ——————————————ՀՀ դրամ, որը ներառում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը:

<u>Գնառաջարկին կից ներկայացնում ենք կազմակերպության փորձը այս ոլորտում եւ գրանցման վկայականի պատճենը:</u>

Սույնով հայտնում եմ, որ հասկանում եմ, որ Հայաստանի ազգային ագրարային համալսարան հիմնադրամը պարտավորություն չի կրում մեր առաջարկն ընդունելու, իսկ ընդունելու դեպքում նշված ծառայությունները կարող են փոփոխվել՝ կապված ծրագրի զարգացումների հետ:

Կազմակերպության ղեկավարի անուն ազգանուն

Ամիս ամսաթիվ՝
Ստորագրություն՝
Կնիք՝
Հեռախոսահամար՝
Էլհասցե՝